‘ԵԹԵ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ԻՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱ ԱՄԵՆ ԿԵՐՊ ՊԵՏՔ Է ՆՊԱՍՏԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ’ ,-ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

24.04.2015 19:45

Փաստաբանների պալատի նախաձեռնությամբ Հայաստան հրավիրված ավելի քան երեք տասնյակ փաստաբաններ այսօր՝ ապրիլի 24-ին, Ցեղասպանությունների կանխարգելման և դրանց իրավական գնահատականներ տալուց հետո քննարկել են ուղղակիորեն փաստանաբությանն առնչվող խնդիրները:
Թեմայի մասին զեկուցող Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը կարևորել է փաստաբանության դերը արդարադատության իրականացման հարցում և նշել, որ եթե պետական մարմինները ցանկանում են ունենալ իրական արդարադատություն, ապա ամեն կերպ պետք է նպաստեն փաստաբանության զարգացմանը: Այնուամենայնիվ, այսօր փաստաբանները իրենց գործունեության մեջ հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների:
Արթուր Հովհաննիսյանը հայտնել է, որ փաստաբանների համար տեղեկություններ ստանալու հետ կապված դժվարություններ են առաջանում հարկային մարմիններում, քաղաքացիական ակտերի կացության մարմնում:
Փաստաբանի գործունեության մեկ այլ խնդիր է առանձնացրել, այն է՝ Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանները, որոնք անվճար իրավաբանական օգնություն են ցույց տալիս, պարտավոր են պետական տվյալներ ստանալիս պետական տուրք վճարել:
Ըստ Հովհաննիսյանի՝ փաստաբանի գործունեության հետ կապված մարտահրավեր է նաև փաստաբանների պաշտպանվածության խնդիրը: Եվ չնայած նրան, որ ՀՀ փաստաբանության մասին օրենքը նախատեսում է պետության պոզիտիվ պարտականությունը, սակայն պրակտիկայում, երբ փաստաբանը հարց է բարձրացնում, որ խնդիր ունի անվտանգության հետ, իրավապահ մարմինները մատնանշում են Կառավարության որոշում, որը գնացուցակ է սահմանում փաստաբանին պաշտպանելու համար, ըստ որում՝ պաշտպանության համար նախատեսված գումարը երբեմն ավելին է, քան փաստաբանի աշխատավարձը:
Խնդիրներից առանձնացվել է նաև քրեակատարողական հիմնարկներում փաստաբանի և վստահորդի տեսակցության սենյակների անմխիթար վիճակը:
‘Հաճախ փաստաբանն իր առողջության հաշվին է հանդիպում իր վստահորդի հետ, քանի որ տեսակցության սենյակները ցուրտ են, խոնավ, ըստ

որում՝ նա ստիպված է լինում ժամեր շարունակ սպասել, որ վստահորդին խցից բերեն’,- ներկայացրել է փաստաբանը:
Արթուր Հովհաննսիյանը հայտնել է նաև, որ ‘Փատաբանների պալատն Արդարադատության նախարարության հետ փոխընբռնման հուշագիր ստորագրելու ծրագիր ունի և որ այն նշված խնդիրների լուծման հարցում էական նշանակություն կունենա:
ՓՊ նախագահի առաջին տեղակալը որպես ամենամեծ մարտահրավեր նշել է դատական համակարգում առկա փողերի լվացման խնդիրը:
«Ըստ որում՝ մենք գտնում ենք, որ կոռուպցիան նաև որոշ փաստաբանների մեջ է արմատավորված, այսինքն՝ այսպես կոչված միջնորդ փաստաբաններ կան: Պալատը բազմիցս հայտարարել է և կշարունակի հայտարարել, որ սրա դեմ ակտիվ պայքար է սկսված»,-խոսքը ավարտել է Հովհաննիսյանը:
Ելույթ են ունեցել արտերկրի գործընկեր փաստաբանները, միջազգային կառույցների ներկայացուցիչները: Քննարկում է ընթացել փողերի լվացման և փաստաբանական գաղտնիքի հետ կապված խնդիրների վերաբերյալ:
Քննարկումից հետո Փաստաբանական համայնքների պատվիրակությունները այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք են մատուցել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })